Հեղինե ԹՈՒՄԱՆՅԱՆ
Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ Ջ. ՍԹԱՅՆԲԵՔԻ «ԵԴԵՄԻՑ ԱՐԵՎԵԼՔ» ՎԵՊՈՒՄ

Ամերիկացի ականավոր գրող Ջ. Սթայնբեքն իր ստեղծագործություններում կրկին ու կրկին անդրադարձել է «ամերիկյան առասպելի» գաղափարին, որի հիմնական տարրն այն բաղձալի ցանկությունն է, թե ամերիկյան մայրցամաքը մարդկության համար նոր Եդեմ է, իսկ ամերիկացին՝ նոր Ադամ: Այսպես, «Երկնային արոտավայրեր» երկում պատկերված Կալիֆորնիայում գտնվող փոքրիկ հովիտը ներկայացվում է որպես «միկրոտիեզերք», որ մարմնավորում է Ամերիկան, իսկ հովտի բնակիչները՝ իրենց պատրանքային անմեղության մեջ միկրոտիեզերքում ապրող ամերիկացիներ: Դիպաշարի կերպարների առջև փռված հովիտը սիմվոլիկ կերպով կրում է «երկնային արոտավայր», անվանումը, իսկ բնակիչներն իրենք երազում են մոռանալ իրենց մեղավոր անցյալն ու նոր կյանք սկսել: Հեղինակային մտադրությունը վիպական գործողությունների ընթացքում դառնում է ակնհայտ. անմեղության մասին նման պատրանքներ անհնար է իրականացնել ժամանակակից աշխարհում, ավելին. նման ձգտումը կարող է նույնիսկ վտանգավոր դառնալ:

«Մեր հոգսերի ձմեռը» վեպի գլխավոր կերպար Ալլըն Հոուլին ապրում է «Ադամի» ժամանակների դեկորացիաներ հիշեցնող տան մեջ: Սթայնբեքն ի դեմս նրա կերտում է մի կերպար, որ համառորեն հրաժարվում է ընդունել մարդկության թերությունները: Իր ստեղծագործությունների մեծ մասում վիպասանը պատկերում է ամերիկացու, և ընդհանրապես մարդու, այն խորին հավատը, թե հնարավոր է ամեն ինչ սկսել նորից, թե հնարավոր է թոթափել այն մտավոր գերությունը, որ մարդ արարածի կենսակերպում առաջանում է կյանքի ընձեռած փորձից և վերադառնալ կորուսյալ Եդեմ ու կորուսյալ անմեղություն: Առաջին անգլիացի գաղութարարների համար ամերիկյան մայրցամաքը նոր Եդեմ էր, և նորաբնակիչների համար այդ մոտեցումը դարձավ Եդեմը վերագտնելու երազանք, որն ամերիկացիները փայփայում են սկսած այդ վաղնջական օրերից: Երազանք, որը խիստ մարդկային է մեղավոր մարդու և ընդհանրապես մարդկու-

թյան համար. փախչել և նոր, անարատ կյանք սկսել: Սա մարդու չար արարքների ժխտման հակումն է և այն հավատի հաստատումը, որ Եդեմն ընկած է մոտակա սարից այն կողմ՝ արևմուտքում: Բայց ռեալիստ Սթայնբեքն այս երազանքին հակադրում է իրական կյանքն իր ամենատարբեր դրսևորումներով, որոնք սովորաբար խեղաթյուրում են ամերիկյան երազանքի էությունը և փոխում նրա որակը:

«Եդեմից արևելք» վեպն սկսվում է Սալինաս հովտի պատկերավոր նկարագրությամբ: Ինչպես երևում է Սթայնբեքի օրագրում կատարված գրառումներից, նա իր առջև հստակ նպատակ էր դրել. պատկերել հայրենի հովիտն իր բնորոշ գույներով, ձայներով, բույրերով, ընթերցողին հաղորդակից դարձնել այն ներշնչանքին, որ տիրել էր իրեն: Նա վեպը նվիրել է իր մշտական խմբագիր՝ Պասկալ Քովիչին, որին ընկերներն անվանում էին Փեթ: Տարիներ անց վերջինիս հուղարկավորության ժամանակ Սթայնբեքն ասել է. «Միայն գրողը կհասկանա, թե ինչ է նշանակում մեծ խմբագիրը: Նա և՛ հայր է, և՛ մայր, և՛ ուսուցիչ, և՛ անձնական դև է, և՛ անձնական աստված: Երեսուն տարի շարունակ Փեթն իմ գործընկերն էր և իմ խիղճը…» /Steinbeck, 7-9/:

Սթայնբեքն սկսել է աշխատել վեպի վրա դեռևս 1947 թվականին և այդ նպատակով մեկնել է Սալինաս ու երեք ամիս շարունակ ուսումնասիրել տարբեր նյութեր, հանդիպել հին ու նոր ծանոթների, հարց ու փորձ արել հին բնակիչներին, թարմացրել իր կապը հայրենի բնության հետ:

1952 թվականի սեպտեմբերին «Եդեմից արևելքը» հայտնվել է գրախանութներում, և մեկ ամիս անց արդեն իր մնայուն տեղը գրավել «արագ սպառվող» գրքերի շարքում:

«Եդեմից արևելք» վեպը պատկերում է 1860-ականներից մինչև Առաջին համաշխարհային պատերազմ (1914-1918) ընկած ժամանակահատվածում Կալիֆորնիայում բնակվող մի ընտանիքի՝ Թրասքերի երեք սերունդների պատմությունը: Մինչ բազմաթիվ ընտանիքներ հաստատվում էին Սալինաս հովտում առանց գրպանում մի գրոշ ունենալու, նոր կյանք սկսելու ցանկությունը Սալինաս էր բերում նաև ունևորների, որոնք սովորաբար գնում էին լավագույն հողերը, կառուցում լավագույն տները, հողերը դեղին մանանեխից մաքրում էին և ցորեն ցանում: Ադամ Թրասքը՝ Թրասքերի երկրորդ

սերնդի ներկայացուցիչը, պատկանում էր վերջիններիս թվին: Այն ագարակը, որտեղ ծնվել ու մեծացել էր Ադամ Թրասքը գտնվում էր Քընեքթիքաթ նահանգում, մի մեծ քաղաքից ոչ շատ հեռու: Նրա հայրը՝ Սայրուս Թրասքը, իր մեջ դիվային ինչ-որ բան ուներ, և զինվորական ծառայությունից ժառանգություն մնացած իր փայտյա ոտքը միշտ «օգտագործում» էր շահադիտական նպատակներով: Երբեմն էլ հարբեցողությամբ էր զբաղվում, կամ տրվում թղթախաղին: Ադամի գունատ ու ինքնամփոփ մայրը, ում հեղինակն այդպես էլ անուն չի տալիս վեպում, ամուսնու հակապատկերն էր: Նա աշխարհի չարիքներից փրկությունը տեսնում էր կրոնի մեջ: Ապրում էր անիրական կյանքով, իր ստեղծած երազների աշխարհում, որտեղ ամուսինը մուտք չուներ: Սակայն մայրն այդպես էլ չհասցրեց ինչ-որ դեր խաղալ Ադամի կյանքում: Նորածին Ադամին զրկելով մայրական խնամքից, նա ինքնասպան եղավ մի փոքրիկ լճակում: Իր գրած վերջին նամակում մայրը խոստովանել էր այնպիսի մեղքեր, որոնք չէր կարող գործած լինել:

Մայրական սիրո պակասը դառնում է ժառանգական Թրասքերի ընտանիքում: Ադամի զույգ որդիները նույնպես զրկվում են այդ անփոխարինելի պարգևից: Մայր-զավակ կապի բացակայությունը կամ հիվանդագին դրսևորումը խորանում է Թրասքերի երրորդ սերնդի կյանքում և ի վերջո դառնում ճակատագրական Ադամի երկու որդիների համար:

Հայրերի և որդիների սթայնբեքյան տեսական ընդհանրացումը հստակ է: Հենց այն հանգամանքը, որ «Եդեմից արևելք» վեպի հիմքում ընկած է երեք սերնդի պատմությունը, իսկ կերպարների անունները, կամ ուղղակիորեն, կամ միայն առաջին տառերով, հիշեցնում են աստվածաշնչյան Ադամ և Կայեն եղբայրներին, ուղղակիորեն բացահայտում է հեղինակային մտադրությունը՝ հայրերի և որդիների խնդիրը հավերժական է: Այն ոչ թե առանձին դեպքերի, այլ ժամանակի խնդիր է: Յուրաքանչյուր սերունդ ծնվում է իր առաքելությամբ, ժամանակն է թելադրում այդ սերնդին հատուկ և՛ նկարագիր, և՛ գործունեություն: Պատահական չէ, որ Ադամի զինվորական հայրը, որի կյանքում ռազմական գործը, պատերազմը, զենքը եղել է կողմնորոշող, կրում է պարսից արքա Կյուրոսի անունը: Սթայնբեքն իր օրագրում նշում է, որ ինքը շատ մեծ տեղ է տալիս անուններին, որ անունը նույնպես բնորոշում է կերպարը, արտահայտում կերպարի

ներքին էությունը: Ադամի հայրը թեև գիտեր, որ բանակը կատարյալ չէ, բայց զինվորական ծառայությունը համարում էր տղամարդու համար միակ պատվաբեր մասնագիտությունը, և տարբեր մայրերից ծնված իր երկու որդիներին դաստիարակել էր զինվորական կարգապահության սկզբունքներով: Չարլզը նման էր հորը. ի ծնե մարզիկ էր, ուներ հորից ժառանգած հաստատակամություն և արագ կողմնորոշվելու կարողություն: Նա հաղթողի խառնվածք ուներ, հաղթում էր բոլոր խաղերում ու մրցույթներում, հաճախ պաշտպանում Ադամին ոչ միայն փողոցային կռիվներում, այլև վայրագ հոր հարձակումներից: Չարլզն իր եղբոր նկատմամբ այնպիսի զգացում էր տածում, ինչպիսին տածում են անօգնական կամ նոր ծնված երեխայի նկատմամբ: Չարլզի բնական բարությունն ու խիզախությունը, թվում է, թե այն գրավականներն են, որոնք մարդու համար հաջողություն են ապահովում, սակայն իրական կյանքն անում է իր ճշգրտումները: Երկու եղբայրների և հոր հարաբերություններում ստեղծվում են այնպիսի ճակատագրական հակասություններ, որոնք ուղիղ գծով սերում են մարդու կյանքի ուղու նախասահմանված անենանախնական կաղապարներից մեկից՝ Աստված-Ադամ-Կայեն:

Ադամը ոչ միայն չի սիրում հորը, այլև, կարելի է ասել, ատում է նրան: Ի տարբերություն Ադամի, Չարլզը հորը սիրում է անմնացորդ, որովհետև նման է նրան: Այստեղ էլ սկսվում է հակասությունը. հայրը սիրում է Ադամին, որը բնավ չի երջանկացնում Ադամին: Բայց հայրական փոխադարձ սիրո բացակայությունը կոտրում է ի ծնե տղամարդ Չարլզի փխրուն հոգին, և նա այլև երբեք չի կարողանում իր տեղը գտնել կյանքում: Նրա բնածին բարությունն ու սերը բախվում են հայրական անտարբերությանը և փշուր-փշուր լինում, հասցնելով նրան հուսահատության: Չարլզի կերպարի ողբերգական զարգացումն ավարտվում է եղբայրների՝ հորն արած նվիրատվությամբ: Աստվածաշնչյան պատմությունը կրկնվում է, ինչպես որ կրկնվել է հարյուրավոր սերունդների կյանքում. հայրը /Աստված/, մարդկությանը հայտնի չէ՝ ինչ նկատառումով, Ադամի /Աբել/ հասարակ նվերը - փողոցում գտած շան քնձռոտ քոթոթ – նախընտրում է Չարլզի /Կայեն/ նվերին՝ գերմանական հրաշալի դանակ, որը գնելու համար նա ծախսել էր իր վաստակած ամբողջ դրամը: Աստվածաշնչյան պատմությունից միակ աննշան շեղումը, այն հանգամանքը, որ Ադամը ոչ մի ջանք չէր թափել իր նվերը ձեռք բերելու գործում, այն

դեպքում երբ նրա նախատիպ Աբելը, կարելի է ենթադրել, թե գոնե երբեմն ջրել էր բանջարեղենն ու մրգերը, հեղինակի գրչի տակ դառնում է միջոց աստվածային ընտրության՝ մարդկային տրամաբանությամբ անմեկնելիությունն ավելի շեշտելու և իրավիճակի դրամատիզմն ավելի սրելու համար:

Այս ճակատագրական դեպքից հետո Չարլի կերպարի բնական զարգացումն ընդհատվում է: Նրա խառնվածքում առաջանում են այնպիսի բացասական հատկանիշներ՝ նախանձ, խանդ, քեն ու վրեժ, որոնք ի վերջո ստիպում են նրան կրկնել Կայենի արարքները:

Աստվածաշնչյան նվիրատվության գիծը շարունակվում է նաև երրորդ սերնդի՝ Ադամի և նրա որդիների կյանքում, պայմանավորելով, ինչպես նշել է, ինքը՝ Սթայնբեքն իր օրագրի էջերում, վեպի ընթացքը /Steinbeck, 10/:

Թրասքերի երրորդ սերնդի՝ Ահարոն և Կալեբ եղբայրների, կյանքը դարձյալ անդրադարձ է Աբել-Կայեն թեմային, բայց ոչ պարզ կրկնություն: Երկրորդ սերնդի ողիսականում գերիշխողն Ադամն էր՝ աստվածաշնչյան բարին և ընտրյալը՝ Աբելը, թեև Սթայնբեքի բարին ներկայացնող կերպարի արարքները կրում են տվյալ դարաշրջանի կնիքը, որը Սթայնբեքի ռեալիզմի առանձնահատկությունն է, մարդու գործողությունների շրջանակը կարծրատիպային բնույթ ունի, սակայն բովանդակությունը կրում է տվյալ ժամանակաշրջանի բարոյական նորմերի դրոշմը:

Թրասքերի երրորդ սերնդի եղբայրները՝ Կալեբը և Ահարոնը, յուրովի են անցնում Կայենի և Աբելի ուղին: Դիպաշարի ծանրության կենտրոնը շեշտակիորեն փոխվում է. գերակշռում է ոչ թե բարու մոտեցումը, այլ՝ չարի, այս դեպքում՝ Կալեբի: Մարդու բոլոր փորձությունների բեռն անցնում է նրա զգայությունների պրիզմայով: Վեպի երրորդ մասը Կալեբի մասն է, նրա փոխակերպման ընթացքը: Թրասքերի վերջին սերունդը, այլաբանորեն ամբողջ մարդկությունը, նորից բախվում է նույն մարդկային, Աստծո կողմից վաղուց նախանշված և խարանի պես մարդկությանը ժառանգած խնդիրներին. Կալեբը սիրում է հորը, հայրը սիրում է Ահարոնին, առաջանում է հակադրություն, որ ողբերգական ավարտ է ունենում: Սերունդների միջև պայքարը շարունակական է: Նախորդ սերնդի մեղքերը փոխանցվում են հաջորդ սերնդին: Հայրերի և զավակների միջև հակասությունը նախասահմանվել է ի սկզբանե: Դա հոգեբանական ցիկլ է,

որից Սթայնբեքն առաջարկում է փրկության ուղի եբրայերեն «թիմշել» բառով: Ահարոնի մահվան համար զղջացող Կալեբը մահամերձ հորից իր մեղքի համար թողություն է խնդրում: Հայրը նրան «ներում» է, արտասանելով «թիմշել», որ թարգմանաբար նշանակում է «հնարավոր է»: Հեղինակի համոզմամբ, հնարավոր է ազատ ընտրություն կատարել բարու և չարի միջև: Մարդու ամբողջ կյանքը մաքառում է դաժան փորձությունների միջով: Ոմանք իրենց բաժին ընկած փորձություններից դուրս են գալիս հաղթանակած, մյուսները՝ կուլ են գնում չարին:

«Եդեմից արևելք» վեպը, որը միանշանակ կերպով չի ընդունվել գրականագետների կողմից, արժանացել է ընթերցողների մեծ համակրանքին: Այն հետագայում ընդգրկվել է ԱՄՆ-ի դպրոցական և համալսարանական ծրագրերում և, Սթայնբեքի մյուս լավագույն գործերի կողքին, իր կայուն տեղը գրավել ամերիկյան դասական գրականության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Steinbeck J. Journal of a Novel: The East of Letters. Viking, 1969.
2. Steinbeck J. The Grapes of Wrath. Penguin Classics, 2006.
3. Steinbeck J. The Pastures of Heaven. Penguin Classics, 1995.
4. Steinbeck J. East of Eaden. Penguin Books, 1902.

Э. ТУМАНЯН – *Проблема поколений в повести Джона Стайнбека “К востоку от рая”*. – Несмотря на то, что произведения лауреата Пулитцеровской и Нобелевской премий писателя Джона Стайнбека пользовались большой популярностью среди читателей, критики относились к ним неоднозначно. В повести “К востоку от рая” автор, уже давно приобретший статус классика американской литературы, пересказывает трагическую историю Каина и Авеля, перенося библейские мотивы в историю семьи Тасков. Настоящая статья посвящена проблеме поколений. Мы попытались раскрыть идею автора при описании трех поколений в семье Тасков. На наш взгляд, Стайнбек хотел показать, что зло присутствует в деяниях и мыслях человека с самого первого убийства, совершенного человеком, однако лишь от нас зависит, какой мы выберем путь.

H. TOUMANYAN – ***The Problem of Generations in the Novel "East of Eden" by John Steinbeck***. – The works of Pulitzer and Nobel Prize-winning novelist John Steinbeck although popular among readers often received lukewarm praise from his critics. The novel East of Eden, considered a classic of American literature, retells the tragic story of Cain and Abel, incorporating the Biblical themes into the story of the Trask family. The present paper focuses on the problem of generations. It is an attempt to reveal the author's intention in depicting the lives of three succeeding generations in the Trask family. We try to make it clear that Steinbeck had in his mind to show that evil has been present in man's thoughts and deeds since the very first murder committed by man, yet it is we who choose how to handle it.